

ԱՐԱՐՁԱԴՈՐԾՈՒԹԵՍՈՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ԵՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Հատ չ. Թովմայի.

Հանս Թովման հարաւային Գերմանիայի ժամանակակից նշանաւոր նկարիչ գեղարուեստագէտը մի շատ գեղեցիկ յօդուած է գրել «Monismus» կոչուած հաւաքածոյի մէջ «Արարչագործութեան վեց օրերը» վերնագրով։ Շատ հետաքրքրական է տեսնել թէ մի համբաւաւոր նկարիչ ի՞նչպէս է ըմբռնում և գնահատում արարչագործութեան պատմութիւնը։

Նա ասում է « . . . արարչագործութեան պատմութիւնը իւր վեհ պարզութեան մէջ այնքան գեղեցիկ է, որ միշտ էլ հարուստ երևակայութեան և գեղարուեստատական-բանաստեղծական ընդունակութեան տէր հոգիների վերայ մեծ տպաւորութիւն է թողել։ Աստուածաբանական նորագոյն դպրոցի հայեացը հետ համաձայն լինելով՝ հեղինակը այդ պատմութիւնը իրերի ճշգրիտ նկարագրութիւն չի համարում. և նա հարց է տալիս, թէ էլ ի՞նչ նշանակութիւն ունի այդ պատմութիւնը, եթէ դա գիտական չէ։ Իսկ այս հարցին նա պատասխանում է հետեւեալ կերպով. «Կարծում եմ, ասում է նա, որ արարչագործութեան պատմութիւնը գեղարուեստական արտադրութիւն է . . . անըմբռնելի եղելութեան մասին մի բանաստեղծութիւն, որը մարդկային բանականութիւնը երբէք լուծել չի կարող։ — Այս աննկարագրելին և անբացատրելին մարդկային հոգու չնորհիւ իբրև պատկերաւոր արտադրութիւն ձև և կերպարանք է ստացել։ Մովսիսի արարչագործութեան պատմութիւնը մի հոյակապ բանաստեղծութիւն է, որը ամեն տեսակ բանաստեղծութիւնների գլուխ գործոց պէտք է համարուի։

Այնուհետև հեղինակը անցնելով ստեղծագործութեան յաջորդական կարգի մասին խօսելու, նա հոգեբանական վերլուծութեան է ենթարկում։ «Արարչագործութեան յա-

ջորդական կարգն էլ շատ ընդդիմախօսութեան է հանդիպում. բայց եթէ մենք դա իրեւ բանաստեղծութիւն ընդունենք, իրեւ արտադրութիւն այն մարդկային հոգու, որը յաւիտենական գաղտնիքի խաւար խորութեան վրայ սաւառնում է, ինչպէս Աստծու հոգին ջրերի վրայ, ապա այդ յաջորդական կարգն էլ ուղիղ պիտի համարել. Այս դեպքում այդ յաջորդական կարգը ներկայացնում է մարդկային գիտակցութեան զարգացման պատմութիւնը . . . » Գիտուն գեղարուեստագէտը կարծում է որանով, թէ ինչ կարգով որ նորածին երեխայի հոգու մեջ զգայութիւններ են ծնուռում, այդ կարգով էլ պատմուածէ արարածների ստեղծագործութիւնը:

Բատ այդ պատմութեան առաջին օրում լոյս ստեղծուեց եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս . . . » «Այն առաջին բանը, ասում է Թովման, որ նորածինը գիտակցում է՝ լոյսի զգայութիւնն է»: Լաւ, բայց զգալ մի բան գեռ բաւական չէ, պէտք էր այդ սկզբնական զգայութեանը մի ձև, մի անուն տալ և նա գտաւ լոյս խօսքը, որը մարդկային հոգու ստեղծագործութիւնն է, նորա քասակից բաժանուելու՝ գիտակցութեան սկզբը.

Երկրորդ օրում հաստատութիւնն է ստեղծուում և այս առթիւ նա յայտնում է հետեւեալ գատողութիւնը. «Եթէ մենք ջուրը իրեւ անզանազանելի, անորակելի և անսահմանելի ըմբռնենք, որի մէջ Աստուած իրեւ մի բաժանող կէտ հաստատութիւնն ստեղծեց և որ նա այդ հաստատութիւնը երկինք անուանեց, պարզ է, որ սատարածութեան գաղափարի ստեղծագործութեան պատկերն է»: Տարածութիւնը երկրորդ մտապատկերն է, որ երեխան գիտակցում է: Տարածութեան մէջ լինելու գիտակցութիւնը յիբաւի ստեղծագործութեան երկրորդ օրն է. Մարդ գիտակցում է իւր սահմանները—նա որոշող և շափող էակ է գառնում և հետեւաբար սկսում է նրա համար երրորդ ստեղծագործութեան օրը:

Յայտնի է, որ ըստ Ս. Գրքի երրորդ օրում բոյսեր և ծառեր ստեղծուեցին, այսինքն այնպիսի բաներ, որոնք

մայր երկրին են կպած և ազատ շարժուել չեն կարող Այս
կարգն էլ մեր հեղինակը ուղիղ է համարում, որովհետեւ
ասում է նա, տարածութեան մէջ ազատ շարժուող իրերը
աւելի գժուար է ըմբռնել, քան երկրի մէջ հանտա-
տուածները:

Չորրորդ օրում ստեղծուում են լուսաւորներ, որպէս
զի ժամանակի նշանները լինին: Այս առթիւ, ասում է
նա. «Այստեղ ժամանակի գաղափարի ստեղծագործու-
թեան պատկերն է. ժամանակի զգայութիւնը տարածու-
թեան և նրանում գտնուած իրերի դիտակցութիւնից շատ
յետոյ է ծագում մարդու մէջ, Յայտնի է որ ընդհանրա-
պէս մարդը մինչև իւր օրոշ հասակը քիչ գաղափար ունի
ժամանակի ընթացքի մասին: Ժամանակի, օրերի և տա-
րիների փոփոխութիւնները հաշուելը շատ աւելի գժուար
է, քան տարածութեան մէջ գտնուած իրերի բազմու-
թիւնը»:

Հինգերորդ և վեցերորդ օրերում ստեղծուում են
զանազան տեսակի կենդանիներ, որոնք տարածութեան
մէջ ազատորէն շարժուում են: Դիտակցութեան համար,
կարծում է հեղինակը, գժուար է ըմբռնել շնչառոր էակ-
ներին, որպէս էակների դրանք համարեա նոյն աստիճանի
վրայ են կանգնած, որի վրայ ինք մարդն է գտնուում:
Մարդը ամենից վերջ իւր էութիւնը ճանաչել կարող է
իրեն միւս էակներին հակադրելով: Այս պատճառով վեց-
երորդ օրուայ վերջին գործը լինում է մարդու ստեղծա-
գործութիւնը: «Ամենից յետոյ մարդը ինքն իրեն է գե-
տակցում, ասում է նա յետոյ է ճանաչում, որ
Աստծու կենդանի շունչն է բնակւում իւր մէջ, որը
նրան կենդանի էակ է դարձրել: Յետոյ զգում է իրեն ջո-
կուած ընդհանրութիւնից, ջոկուած իրեւ ճանաչող, անուն
գնող, իրեւ գոյութեան դրախտում ապրող էակ, որը
վայելում է բոլոր պտուղներից: Նա ճանաչում է և անուն
է տալիս իւր հետ ստեղծուած արարածներին, աւելի վազ
քան թէ գիտակցում է, թէ ով է ինքը, կամ այդպիսի
մի հարց տալ իրան կամ իմանալ, որ ինքը մի մարդ է»:

Արարչագործութեան վեց օրերի յաջորդական կարգը այսպէս հիմնաւորելով՝ նա աւելացնում է. «Եյս ձեռվ գատելով կարելի է անշուշտ ասել, որ արարչագործութեան պատմութիւնը իւրաքանչիւր երեխայի պատմութիւնն է, թէ ինչպէս նա իւր երեակայութեան մէջ կամաց կամաց գիտակցութիւն է կազմում երկրի մասին» Այդ ստեղծագործութիւնը պատմական եղելութիւն չէ, այլ կենդանի հոգու կեանքն է, ինչպէս որ երեակայութեան ստեղծագործող ուժի, այսինքն գեղարուեստի իւրաքանչիւր արտադրութիւն պէտք է լինի. Այդ պատմութիւնը մեր երեակայութեան ստեղծած պատկերն է».

Ինչ որ վեցօրեայ արարչութիւնից յետոյ է պատմուած Մովսիսի գրքում ունի իւր խոր հոգեբանական պատճառը՝ Օրինակ եթէ կինը յետոյ է ստեղծուում, պատճառը՝ որովհետեւ մարդու մէջ ցանկութիւն գէպի կինը շատ յետոյ է ծնուռում. Մարդկանց դրախտային խաղաղութիւնը վրդովւում է օձի պատճառով՝ այսինքն բարւոյ և չարի գաղափարների ճանաչովութիւնից, որը միայն հասուն հասակի տէր մարդն է ունենում. Դրախտային խաղաղութիւնը վրդովւում է մարդու սրտում. նա գուրս է մզուռում նիւթի և կեանքի ամեն ցաւերի գէմ կռուելու, մինչեւ որ մահը մարդկային հողակոյտը նորից հող է գարձնում».

Այսպէս ուրեմն ինչ կարգով որ տիեզերքը մեր հոգու մէջ պատկերանում է, այդ կարգով էլ նկարագրուած է արարչագործութեան պատմութիւնը. բայց ինչ բան է այն կամ ինչպէս անուանել մարդու այն կարողութիւնը, որով մենք տիեզերքը ըմբռնել և ճանաչել կարող ենք. ահա սա է հարցերից ամենագժուարը, որի վրայ աշխարհիս գիտունները իրենց գլուխն են ջարգում. բայց ոչ մի եղրակացութեան չեն յանգում. Այս առթիւ յարգելի գեղարուեստագէտը կարծում է, որ մենք այդ կարողութիւնը աւելի հեշտութեամբ իրեւ լոյս մտածել կարող ենք. «Որովհետեւ, ասում է նա, գտ այն անըմբռնելի էակից է տռաջ գալիս, որի չնորհիւ մենք գոյութիւն ունինք. Այդ պատճառով մնում է միայն, որ մեր մէջ

գտնուած այդ փոքրիկ լոյսը աստուածային անուանենք, ինչպէս որ մենք այն ամենը, ինչ որ մեր զգայութեան սահմաններից այն կողմն է ընկնում, ջերմեռանդօրէն աստուածային պիտի անուանենք։ Մի ուրիշ արտայայտութիւն քան «Թող լոյս լինի» գիտական հետազօտութիւնն էլ չի կարող գտնել գոյացութեան սկիզբը ձևակերպելու համար։

Կարդալով այս տողերը փիլիսոփայութեան պատմաբանը՝ անշուշտ կյիշի կանտին, որը մարդու հոգեկան կեանքում երեք կարողութիւններ որոշեց, բանականութիւն, կամք և երեակայութիւն և այդ երեք կարողութիւնների սահմանները ցոյց տուաւ կանտի համաձայն գիտութիւնն ու կրօնը ի զուր տեղ միմեանց հետ կոռուում են. գոյանից իրաքանչիւրը իւր տեղում գոյութեան իրաւունք ունի, որովհետեւ դոքա բղխում են հոգու տարբեր գործողութիւններից։ Պարզ է, որ մեր յարգելի գեղարուեստագէտն էլ ազդուած է կանտի փիլիսոփայութիւնից, որը լինելով մեծ գիտնական և փիլիսոփայ կրօնին իւր արժանաւոր յարգանքը տալիս էր։ Ա. Գրքի մասին մեր յօդուածագիրը հետեւեալ հայեացըն ունի. «Ինչպէս ուզում են թող մտածեն Ս. Գրքի մասին, նորա սկզբի «Թող լոյս լինի» խօսքը այդ Գրքի հսկայ նախարանն է. և ինձ թուում է, որ Ս. Գրքի պարունակած մութ ու խառն կէտերից միշտ և շարունակ այդ նախարանը իրրե հիմնական ձայն լսւում է և նրան մի միութիւն տալիս։ Այդ այն ձայնն է, որը Քրիստոսի մէջ նոր կտակարանում գիտակցօրէն Աստուած մարդկութեան մէջ մարմնանում է։ Նա ցանկանում է առաջ բերել մարդկութեան նոր կազմակերպութիւն։ Նա գոյութեան ծանրութեան կենդրոնը հաստատում է իւրաքանչիւր անհատի հոգու խորքում, որին նա գէպի ազատութիւն է առաջնորդում, որը գոյութիւն ունի միայն մի չնաշխարհիկ թագաւորութեան մէջ։»

Ս. Գրքումն ուրեմն շատ բան մարդկային գեղարուեստասէր հոգու արտադրութիւն պէտք է համարել, որը գի-

տութեան շափերով չպէտք է կշռուիս միրերին կառչած գիտական հետազօտութիւնների առաջ կարող է ոչընչաւնալ ամեն մի բանաստեղծութիւն, մեր երգերը և մեր երաժշտութիւնը պէտք է լուին, բայց եթէ մարդու էութեան սկզբնական աղբիւրից բղխող այս գործունէութիւնը դադարէր, այն ժամանակ գիտութեանը պիտի պակասէր այն արտայայտութիւնը, որով նա իւր գործառութիւնները պարզում է, նա պիտի չորանարա. Ստեղծագործութեան պատմութիւնը մի գեղարուեստական արտագրութիւն է, իսկ դրա հետ կապ չունին գիտական հետազօտութիւնները և փորձի վրայ շափուած բանականութեան գործունէութիւնը, որը տիեզերքի առաջ գալը կամ նորա էութիւնը պարզել է կամենում:

— Անդ, կարելի՞ է գեղարուեստական մի արտագրութիւնից ճշմարտութիւն պահանջել:

Այս հարցը շատ է զբաղեցրել գեղարուեստագէտներին և գիտուններին. Հոմերոսի Իլիականը կամ Ֆիրդուսիի Շահնամէն զուտ պատմական ճշմարտութիւններ չեն պարունակում իրենց մէջ, բայց այնուամենայնիւ նոքան նոյնչափ և աւելի յարգի են, որքան Մոմզէնի Հռավմէական պատմութեան հատորները. Անշուշտ այդ գիւցագներգութիւններն էլ որոշ ճշմարտութիւններ պարունակում են իրենց մէջ, որովհետեւ առհասարակ իւրաքանչիւր գեղարուեստական արտագրութիւն մարդու ներքին կեանքի, հագեկան գործունէութիւնների հայելին է.

Եւ արարչագործութեան պատմութիւնն էլ այն հայելին է, որի մէջ հոգին տեսնում է, թէ ինքը ի՞նչպէս և ի՞նչ կարգով ըմբռնեց տիեզերքը:

Մ. Խոստիկեան.

Կամ ու իւրաքանչ առանձին առաջ տակ մնայած մասով մասունք պահպան է հաւաքառութեան մաս և առաջ տակ մասունք պահպան է առաջ տակ մաս և առաջ տակ մասունք. Առաջ ունո՞ւ պահպան է պահպան մասունքուն առաջ ունո՞ւ